Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №-2 (40) 2021 Гуманитарные науки

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ՄԱՆՈՒԿՅԱՆ Գ.Ա.

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական

համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

manukyangohar2019-8@aspu.am

Հոդվածում քննարկվում են կենցաղային տեխնիկայի ապահովմանը միտված փորձարարական աշխատանքի արդյունքները, հաստատվում է այս ոլորտում առկա թերացումները, նախադպրոցական տարիքի երեխաների անվտանգության ապահովման հնարավորությունները կենցաղային տեխնիկայի հետ ծանոթացման փուլում: Մշակվել են կենցաղային տեխնիկայի հանդեպ անվտանգությունն ապահովող մանկավարժական տեխնոլոգիաներ և նշված են այդ գործընթացը խթանող մանկավարժական պայմանները:

Հիմնաբառեր. անվտանգ վարքագիծ, կենցաղային տեխնիկա, վտանգ, անվտանգ միջավայր, հոգեբանական և ֆիզիկական անվտանգություն, անվտանգ կենսակերպ, անվտանգության կանոններ:

Ներկայացված է խմբագրություն. 15.11. 2021թ

Երեխաների անվտանգության խնդիրը 21-րդ դարի գլոբալ առաջնահերթություններից է: Սոցիալական կյանքի վերընթաց զարգացումները ցույց են տալիս սոցիալական անկայունության անընդհատ աճի դրսևորումներ, քանի որ տարաբնույթ աղետները, մարդածին վտանգները նյութական և հոգևոր առումներով լուրջ սպառնալիք են մարդկության համար: Բացի դրանից, ահաբեկչությունը, հանցագործությունը, բնական ու տեխնիկական աղետները, պատերազմները և այլն, իրենց մասշտաբայնությամբ ազդում են ոչ միայն մեծահասակների, այլև երեխաների կենսագործունեության վրա՝ պատճառելով նյութական և հոգևոր կորուստներ: Այս խնդրին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում: Հիմնախնդիրը կապվում է բազմաթիվ օբյեկտիվ

և սուբյեկտիվ պատճառների հետ, որոնք հատուկ ուսումնասիրության նյութ են անվտանգության ուսումնասիրման ոլորտում: Ինչ վերաբերվում է սուբյեկտիվ գործոններին, ապա կարող ենք ասել, որ վերջին տարիներին բազմաթիվ գիտաժողովներ են կազմակերպել մարդածին գործոնների ուսումնասիրման վերաբերյալ, սույն հետազոտությունը մի փորձ է ուղղված կենցաղային տեխնիկայի սխալ օգտագործման պատճառով առաջացած վտանգների ուսումնասիրման հարցին: Այս առումով կարելի է փաստել, որ երեխաները, որպես հասարակության անպաշտպան մաս, հաճախ հայտնվում են կյանքի համար վտանգավոր իրավիճակներում, որոնք սպառնում են նաև նրանց ֆիզիկական գոյությանը: Թերևս դրանով է պայմանավորված այն իրադրությունը, որ նախադպրոցական կրթության հիմնախնդիրների շարքում դիտարկվում են նաև անվտանգության ապահովմանը միտված անվտանգ գործընթացների կազմակերպումը: Անվտանգ վարքագծի դաստիարակության հիմնական նպատակն է ոչ միայն երեխաներին հեռու պահել կենցաղային տեխնիկայի հնարավոր վտանգներից, այլև նրանց սովորեցնել կենցաղային տեխնիկայի օգտագործման ընթացքում խուսափել վտանգավոր իրավիճակներից, որոշ դեպքերում կանխել հնարավոր վտանգները, հասկանալ իրավիճակը և որոշումներ ընդունել սեփական անվտանգությունը պահպանելու համար: Բացի նշվածներից, նկատի ունենանք, որ անվտանգ վարքագծի դաստիարակությունը կրում է նաև մարդասիրական բնույթ, որն ուղված է երեխաների բարոյական դաստիարակության ու աշխարհընկալմանը, շրջակա միջավայրի, սեփական անձի, հասարակության, նաև խնայողական սրտացավ և պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը[1,էջ5]:

Կյանքի անվտանգ մշակույթ ձևավորելու համար առաջին հերթին նախադպրոցական կրթական համակարգը պետք է լուծի հետևյալ խնդիրները՝

-սովորեցնել երեխաներին կողմնորոշվել տարածության մեջ, դիտունակ լինել, որոշել վտանգավոր իրերը, հոսանքակիր տեխնիկայի սարքավորումները, սուր, կտրող առարկաները, կենցաղային քիմիան, դեղահաբերը և դրանց համապատասխան ընտրել վարքագիծ, արարքներ, պահվածք, որոնք թույլ կտան պահպանել ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Հետևաբար անհրաժեշտ են տարբեր ուսուցողական խաղ-պարապմունքների միջոցով երեխաներին սովորեցնել անվտանգ վարքագիծ, անձնային հիգիենայի կանոններ և զարգացնել երեխաների ինքնուրույնությունը՝ ձևավորելով նրանց մեջ վտանգը նկատելու կարողություն, զգուշություն, արագ կողմնորոշվելու և գործելու կարողություն, քանի որ վտանգները արագ են զարգանում, ուստի երեխաները ինչքան արագ գործեն, այնքան հուսալի կապահովեն իրենց կյանքը: Այս հարցերը սերտորեն կապված են միմյանց հետ, բավականին բարդ են և աշխատատար: Երբեմն մանկապարտեզներում կամ ծնողների շրջանում կարծում են, թե մեկ-երկու ուսուցողական պարապմունքներով հնարավոր է երեխային հասանելի դարձնել կյանքի անվտանգությունը

ապահովող կարողությունները՝ բավարար չափով պատկերացում տալով նրանց սեփական առողջության պահպանմանը միտված հրահանգներով: Անվտանգ կենսակերպի ապահովման համար կարևոր դերը պատկանում է նախադպրոցական կրթությանը: Առողջ ու անվտանգ կենսակերպի մշակույթը ի սկզբանե չի տրվում երեխային, քանի որ այն կրթության, դաստիարակության և ինքնազարգացման հետևողական աշխատանքի արդյունք է: Որպեսզի մարդը կարողանա ապրել ժամանակակից աշխարհում երբեմն նաև ագրեսիվ սոցիալական միջավայրում և պահպանի սեփական առողջությունը, անհրաժեշտ է ունենա անվտանգ վարքագծի ձևավորված համակարգ: Նախադպրոցական տարիքի երեխաների անվտանգ վարքագիծ ձևավորելու հիմնախնդրին անդրադարձել են Լ.Լ. Տիմոֆեյևան,Կ. Բելովան, Ի.Լիկովան և այլ հեղինակներ: Ըստ Տ.Ի.Գրիզիկի և Վ.Գ.Գլուշկովայի նախադպրոցականի անվտանգությունը կազմակերպվում է երկու ուղղությամբ՝ 1) վտանգավոր իրավիճակներից խուսափելը և 2) անվտանգ վարքագիծ դաստիարակելը[2 էջ 8]: Ն.Ն. Ավդիևա Ն.Ն, Կնյազևա Օ.Լ. և Ստերկինա Ռ.Բ. գտնում են, որ պետք է ձևավորել նախադպրոցական երեխաների վտանգավոր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և անվտանգ վարքագծի ապահովման գործնականում կիրառելու կարողություններ[3էջ5]: Ն.ՅՈՒ. Մարչուկը, Ն.Վ.Պեստովան, Տ.Ռ. Դիլմեևան, առաջ են քաշում «Անվտանգ կենսակերպ» հասկացությունը, որը ներառում է ոչ միայն վտանգներից պաշտպանությունը, այլև առողջ ու անվտանգ ապրելակերպի ձևավորումը[4էջ18]: Հատկանշական է, որ բոլոր ուսումնասիրողները կարևորում են մեծահասակի դերը, վարքագիծը և հատկապես երեխայի գնահատականը մեծահասակի արարքներին: Լ.Լ Տիմոֆեևան գտնում է, որ անվտանգ վարքագծի մշակույթ ձևավորելու կրթության պետք է իրականացնել ընտանիքի հետ միասին[5էջ5]: Ե.Ս. Բաժինան և Օ.Ա. Կապինան կարծում են, որ անվտանգության հանդեպ պատասխանատվությունը ձևավորվում է կյանքի բոլոր փուլերում, իսկ հիմքը դրվում է նախադպրոցական տարիքում, առողջ ապրելակերպի և անվտանգ վարքագծի հմտությունները կարելի է բաժանել երկու փուլի՝ 1) 3-5տարեկան և 2) 5-7 տարեկան: Առաջին փուլը գիտելիքների հավաքագրումն է, քանի որ այս տարիքի երեխաները տպավորվող են, հետաքրքրասեր են, երկրորդ փուլում երեխաների հոգեբանական դիրքորոշումն է: Այս տարիքային խմբի երեխաները իրենց զգում են մեծ, հետևաբար գիտակցում են պատասխանատվություն իրենց արարքների համար [6, էջ 316]: Այս տարիքի երեխաների հետ աշխատանքը պետք է ուղղված լինի ունեցած գիտելիքների ամրապնդմանը և այդ գիտելիքների գործնական կիրառմանը: Այսպիսով, ուսումնասիրելով մի շարք անվտանգության ծրագրեր կարելի է մտահանգել, որ ծրագրերը ունեն որոշակի նմանություններ, քանի որ բոլորի հիմքում անվտանգության ապահովումն է, վտանգավոր իրավիճակների կանխատեսումը և խուսափումը, վտանգավոր իրավիճակներում արագ կողմնորոշումը: Այսուհանդերձ, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դեռևս շատ են առկա վտանգները կենցաղային տեխնիկայի

օգտագործման գործընթացում և երեխայի կյանքին սպառնացող հետևանքները: Այս իրողությունը ցույց է տալիս, որ կենցաղային տեխնիկայի հանդեպ դեռևս մեր ընտանիքներում բավարար ուշադրություն չի դարձվում երեխաների անվտանգության ապահովմանը, քանի որ ընտանիքի անդամները կարծում են, որ եթե երեխաները հեռու մնան տեխնիկայից, ապա զերծ կմնան վտանգներից: Մեր կատարած սոցիոլոգիական հարցումներից պարզվեց, որ երիտասարդ ծնողների զգալի մասը, վստահելով իրենց ընտանիքի մեծահասակներին կարծում են, որ երեխաները անվտանգ են, մինչդեռ տատիկները և պապիկները ֆիզիկապես չեն կարող ամեն վայրկյան հետևել երեխային և ապահովել նրա անվտանգությունը: Ահա թե ինչու անդրադառնում ենք երեխաների անվտանգության ապահովման խնդրին, անվտանգ կենսակերպին, վարքագծի կանոններին և անվտանգության միջոցներին: Այս խնդրահարույց և միմյանց հետ սերտորեն կապված հարցադրումները ենթակա են մանրակրկիտ ուսումնասիրության, քանի որ անվտանգության խնդիրը կապվում է մանկավարժական պայմանների և երեխա-մեծահասակ հարաբերությունների կարգավորման հետ: Ենթադրվում է, որ բարոյահոգեբանական միջավայրի ստեղծումը, ընտանիքի բոլոր անդամների վերաբերմունքը, սերը երեխայի նկատմամբ, անվտանգ մանկության նպաստավոր պայմանների ստեղծումը հնարավորություններ կընձեռնեն առավելագույնս նպաստելու անվտանգության կանոններին հետևելու, գիտակցելու կենցաղային տեխնիկայի օգտագործման հետ կապված վտանգները և դրանց հետևանքները: Առաջնահերթ է, որ ծնողները երբեք երեխաներից չպահանջեն այնպիսի գործողություններ, որոնց իրենք չեն հետևում կամ դուրս են մնում իրենց ուշադրությունից: Չէ որ ծնողական պարտականությունների մեջ մտնում են անվտանգության և երեխայի կենսագործունեության ապահովումը ինչպես տանը, այնպես էլ դրսում: Իհարկե, անվտանգության ապահովումը պետք է հասանելի լինի երեխային, եթե ծնողները մատչելի լեզվով բացատրեն երեխային վտանգի առկայությունը կենցաղային տեխնիկայի օգտագործման գործընթացում, իսկ այս հարցը կապվում է սովորեցնելու հետ: Խնդիրն այն է, որ երեխաները մշտապես հետարքրվում են կենցաղային տեխնիկայի աշխատանքով, բայց դա պետք է այնպես կազմակերպել, որ երեխաների իմացական հետաքրքրությունների հետ, նրանց սովորեցնեն այդ տեխնիկայի հետ կապված վտանգները և հետևանքները: Անվտանգ վարքագիծ ձևավորելու նպատակով ուսումնասիրել ենք այն մանկավարժական գործընթացները, որոնք հատուկ պարապմունքների անցկացման արդյունքում հանգեցնում են կենցաղային տեխնիկայի վտանգների գիտակցմանը: Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում են մեր կողմից պարապմունքների ընթացքում կիրառած մի քանի տեխնոլոգիաներ՝ ուղղված կարողությունների ձևավորմանը:

Մանկավարժական-կազմակերպչական տեխնոլոգիա	ընտրել նախադպրոցական կրթության չափորոշիչներին համապատասխան պարապմունք, որի հիմնական նպատակը երեխաների անվտանգության ապահովման կարողությունների ձևավորումն է, կոնկրետ օրինակներով երեխաներին բացատրել անվտանգության կանոնները, որոնցով ապահովվում է իր անվտանգությունը, արձանագրել անվտանգության կանոնների յուրացման ընթացքը և բացատրել սխալ նկարագրությունը, պարզել, թե երեխան գիտակցում է վտանգի առկայությունը և կարողանում է պատասխանել այն հարցին, թե ինչու՞ չպետք է անել այս կամ այն գործողությունը, և արդյո՞ք երեխան պատրաստ է տեղեկացնելու մեծահասակին կենցաղային տեխնիկայի վտանգի մասին, հատուկ ընտրված վարժությունների միջոցով մի քանի անգամ ստուգել և ամրապնդել վտանգին վերաբերվող գիտելիքները և կարողությունները:
Խաղային տեխնոլոգիա	Կենցաղային տեխնիկայի վտանգներից հեռու պահելու նպատակով կիրառվում են խաղային տեխնոլոգիա, որի միջոցով կազմակերպում ենք խաղ-բեմականացումներ, որոնք ոչ միայն պատկերացում են տալիս առօրյա վտանգների մասին, այլև դերակատարումների միջոցով, միջանձնային հարաբերություններ է ստեղծում կենցաղային տեխնիկայի վտանգների հետ կապված «մասնագետների» միջև (հրշեջ, բժիշկ, ոստիկան, անվտանգության աշխատակից, ծնող, երեխաներ): Նմանատիպ խաղերի միջոցով հաղթահարվում են երեխաների տագնապայնությունը և վախի զգացողությունը հրդեհի, ուժեղ աղմուկի և այլ իրողությունների հանդեպ, բացի դրանից կհստակեցվեն տարբեր իրավիճակներում դրսևորվող վարքագիծը:
Արտ-տեխնոլոգիա	Արտ-տեխնոլոգիան հնարավորություն է տալիս երեխաներին ստեղծել կենցաղային տեխնիկայի հետ կապված պայմանական վտանգի տեսարաններ՝ տարածքի պատկերման, քանդակի, նկարի և տարբեր շինանյութերի օգտագործման միջոցով: Այս տեխնոլոգիայի կիրառմամբ տարբեր դիրքերով կերպարանափոխում ենք վտանգի իրավիճակները և դրանց իրական հետևանքները:
Վալեոլոգիական հեքիաթներ	Ստեղծագործական կարողությունները գիտակցության մակարդակում ի հայտ են գալիս երեխայի, մեծահասակի հաղորդակցման գործընթացում, որով ամրապնդվում են երեխայի ցանկությունները հասկանալու կենցաղային տեխնիկայի վտանգը սխալ շահագործման պայմաններում:
Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիա	Երեխաները, տեղեկատվական համակարգչային տեխնիկայի միջոցով, սիրում են տեսնել և լսել վտանգների մասին, սակայն միշտ չէ, որ երեխաները միայնակ կարողանում են գտնել կենցաղային տեխնիկայի վտանգին վերաբերող համապատասխան տեսանյութեր: Պրակտիկան ցույց է տալիս, որ ծնողների որոշ մասն առանձնապես չի հետաքրքրվում, թե երեխան տվյալ պահին ինչ է դիտում կամ լսում: Մինչդեռ անհրաժեշտ է նախօրոք ընտրված պատկերների միջոցով ծնողները երեխաների հետ դիտեն, իսկ անհրաժեշտության դեպքում բացատրեն վտանգների առկայությունը, պարզաբանեն, մատչելի լեզվով մեկնաբանեն վտանգավորության չափը և հարցեր ուղղեն երեխային, թե նա ի՞նչ վարքագիծ կդրսևորի նմանատիպ իրավիճակներում, իսկ վտանգի դեպքում ինչպե՞ս պետք է վարվի երեխան, ինչպե՞ս պետք է իրազեկի մեծահասակին կամ պաշտպանվի վտանգից:

Վերոհիշյալ տեխնոլոգիաները ներառում են ուսուցողական խաղեր, խաղ-բեմականացումներ, ներկայացումներ, ուսուցանող համակարգչային խաղեր, մուլտեր և այլն: Բացի դրանից, մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է ընձեռում աստիճանաբար ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ, զարգացնել երեխայի անհատական որակները, որոնք բնականաբար անհրաժեշտ են ամբողջ կյանքի և սեփական անվտանգության ապահովման համար վտանգավոր իրավիճակներում հնարավոր վտանգների կանխատեսման գործընթացում: Կենցաղային տեխնիկայի հանդեպ անվտանգ վարքագիծ ձևավորմանը միտված, մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետությունը պարզաբանելու համար իրականացվել է փորձարարական աշխատանք, որը հիմնված է մանկավարժական տեխնոլոգիաների հիմնավորված ընտրության վրա: Հետազոտական աշխատանքի մեթոդական հիմքը շաղկապվել է կրթական խնդիրների՝ սոցիալ-հաղորդակցական կարողությունների, վտանգավոր իրավիճակներից խուսափելու, վտանգավոր իրավիճակներում արագ կողմնորոշվելու և ճիշտ վարքագիծ դրսևորելու հետ: Փորձարարական աշխատանքում ներառվել են գործունեության տարբեր ձևեր: Կենցաղային տեխնիկայի նկատմամբ անվտանգ վարքագիծ ձևավորելու գործընթացը իրականացվել է կրթական բոլոր ոլորտների ինտեգրման միջոցով: Այսպիսով՝ 21 ավագ նախադպրոցականների հետ տարված հետազոտական աշխատանքի ընթացքում արձանագրվել են հետևյալ արդյունքները.

Աղյուսակ №2

ԱՆՎՏԱՆԳ ՎԱՐՔԱԳԾԻ ՀԱՆԴԵՊ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՓՈՒԼ	ՉԵՎԱՎՈՐՈՂ ՓՈՒԼ
ՑԱԾՐ	5 երեխա(23,8%)	2 երեխա (10%)
ՄԻՋԻՆ	8 երեխա(38,10%)	8 երեխա(38,10%)
ԲԱՐՁՐ	8 երեխա(38,10%)	11 երեխա (52%)



Գծապատկեր. Արձանագրող և ձևավորող փուլի արդյունքերը

Փորձարարական աշխատանքը ցույց տվեց, որ մանկավարժական տեխնոլոգիաներն արդյունավետ կլինեն համապատասխան մանկավարժական պայմանների առկայության դեպքում: Հետևաբար անհրաժեշտ է ընդլայնել երեխաների պատկերացումները կենցաղում անվտանգ վարքագծի վերաբերյալ, կիրառել զարգացնող-առարկայական միջավայրը, համագործակցել ընտանիքի հետ: Բացի դրանից, կենցաղային տեխնիկայից անվտանգությունն ապահովող աշխատանքներում հաջողության հասնելու համար պետք է մանկապարտեզը և ընտանիքը մշտապես համագործակցեն միմյանց հետ, քանի որ տեխնիկային վերաբերող գիտելիքները պետք է ամրապնդվեն նաև տանը: Այսպիսով, ելնելով խնդրի կարևորությունից անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել երեխաների վարքագծին, լուսավորչական աշխատանք ծավալել ընտանիքում, փաստացի օրինակներով ցույց տալ կենցաղային տեխնիկայի օգտագործման վտանգները հատկապես նոր տեխնիկայի ձեռքբերման պայմաններում: Գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանում երեխաները մեծ մասամբ մնում են տատիկ-պապիկների հետ, ովքեր դժվար են շարժվում և չեն կարողանում մշտապես հետևել երեխաներին վարքին: Մի իրողություն, որը պետք է հաշվի առնեն երեխայի ծնողները և անվտանգ պահեն վտանգ ներկայացնող տարածքները: Մանկապարտեզում տարվող դաստիարակչական աշխատանքներում անհատականացվեն և որակական նոր մակարդակի հասցվեն կենցաղային տեխնիկայի վտանգավորությունը բացահայտող խաղերը և պարապմունքները՝ նկատի ունենալով, որ

երեխաների զգալի մասը տեղեկացված չեն, անզգույշ են իրենց վարքագծի դրսևորումներում և չեն կարող խուսափել հնարավոր վտանգներից՝ հատկապես ամռան շրջանում: Մեր կողմից կատարված փորձարարական աշխատանքում պարզել ենք, որ եթե նախապես երեխաներին ծանոթացնում ենք վտանգի աղբյուրները, տարբեր կողմերից բացատրում ենք վտանգների հետևանքները, քայլ առ քայլ սովորեցնում ենք նաև վտանգից խուսափելու եղանակները, ապա երեխաները դրսևորում են զգույշ վարք, իսկ վտանգի առկայության դեպքում ինչպես պաշտպանվել դրանցից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղետների ռիսկերի նվազեցման կրթություն,(Ձեռնարկ նախադպրոցական կրթական հաստատությունների և դպրոցների մանկավարժների համար), ՄԱԿ-ի մանկական հիմանդրամ, (UNICEF), 2016, էջ5-6
2. Гризик Т. И., Глушкова Т.В. Формирование основ безопасного поведения у детей 3-8 лет. (методическое пособие для воспитателей) Москва, 2015, с.8-19
3. Авдеева Н.Н., Князева О.Л., Стеркина Р.Б., Безопасность: учебное пособие по основам безопасности жизнедеятельности детей старшого дошкольного возраста. М., 2009, с.3-18
4. Марчук Н.Ю., Пестова И.В., Дильмиева Т.Р. Методические материалы по вопросам формирования навыков безопасного поведения у детей, Екатеринбург, 2014, с.14-20
5. Тимофеева Л.Л. Формирование культуры безопасности у детей от 3 до 8 лет. Санкт-Петербург 2019, с. 5-33
6. Бажина Е.С., Капина О.А. Формирования основ безопасности жизнедеятельности у дошкольников, (Научное сообщество 21-ого столетия, гуманитарные науки), Новосибирск, 2012, с. 316-321

ПРОБЛЕМА ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ БЫТОВОЙ ТЕХНИКИ В СТАРШЕМ ДОШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

МАНУКЯН Г.А.

В статье рассматриваются результаты экспериментальной работы по обеспечению безопастности использования бытовой техники, подтверждаются недостатки в этой области, возможности безопасности работы дошкольников с бытовой техникой. На этапе ознакомления разработаны педагогические технологии по обеспечению безопасностной работы с бытовой техникой, указаны педагогические условия, способствующие этому процессу.

Ключевые слова. Безопасное поведение, бытовая техника, опасность, безопасная среда, психологическая и физическая безопасность, безопасный образ жизни, правила безопасности.

THE PROBLEM OF ENSURING THE SAFETY OF HOUSEHOLD APPLIANCES IN SENIOR PRESCHOOL AGE.

MANUKYAN G.A.

Armenian State Pedagogical University afher Kh. Abovyan

The issue of child safety is one of the global priorities of the 21st century. The upward developments of social lite show the manifestations of the ever-increasing social instability, as various disasters, man-made dangers are a serious threat to humanity in material and physical terms.In addition, terrorism, crime, natural and technical disasters, wars, etc., on their scale affect not only the lives of adults, but also the lives of children, causing material and serious losses. The main purpose of educating sate behavior is not only to keep children away from the possible dangers of house hold appliances, but also to teach them to avoid dangerous situation while using household appliances, in some cases to prevent possible dangers, to make decisions to maintain their own safety. Pre-school education plays an important role in ensuring a secure lifestyle. The culture of a healthy and sate lifestyle is not initially given to the child, as it is the result of education, upbringing and self-development through consistent work. In order to develop sate behavior, we have studied the pedagogical processes that, as a result of conducting special exercises, lead to the realization of the dangers of household appliances. During the trainings we used several technologies aimed at building skills: pedagogical-organizing technology, valeological tales, information-co-educational technology. The above-mentioned technology include educational games, game-performances, performances, educational computer games, cartoons, etc. Experimental work based on the well-chosen choice of pedagogical technologies has been carried out to clarify the effectiveness of pedagogical technologies aimed at developing safe behavior towards house hold appliances.

Keywords: sate behavior, home appliances, danger, safe environment, psychological and physical security, sate lifestyle, safety rules.

Տպագրության է երաշխավորել հոգեբ. գիտ. դոկտոր, պրոֆ.Վ.Ս.Կարապետյանը

10.12.2021թ.